

506-6

✓

ԱՐԻ ԻՈՆԻԴԱՐՅԱՆ.



ՅԱՍԱՐԻ  
ՎԵՆԵԼԻԲՐ  
ՊԱՏԱՎՍԻԲ

505



Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

ԱՐՇ. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ԲԱՆԹՂԹԱԿԻՑ ՅԱՍԱՐԻ  
ՎԵՐԵԼՔԸ

(Պ Ա Տ Մ Վ Ա Ծ Բ)

15284

A  $\frac{I}{8291}$





Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0)** license.

Դու կարող ես.

սրտնենել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով  
մեջբերել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Խոնդկարյան, Արշ.

Բանթղթակից Հասարի վերելքը:

15283

/Պատմվածք/: Ե. Հրատ, Խմբագրող. Հայաստան.

15284

տան. Բան.-բաժին Նո. 1, 1924:

27 էջ, 18 սմ.:

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

1924

# ԲԱՆԹՂԹԱԿԻՑ

## ՅԱՍԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ

### 1. Յակուկյան Սարգիսը վորոճում է բանթղթ. գառնալ

1923 թվի գարնանն էր: Յերբ առավոտները դուրս էյի գնում, վոր գործարան գնալուց առաջ մի քիչ ման դամ, քամին Բ-ի կողմից գալիս, վրա յեր պրծնում տարիներով կարոտած կնոջ պես, վզովս եր ընկնում, յերեսս ու ճակատս եր համբուրում:

Եսպես մի որ ել զբոսնելուց ուզում էյի յետ դառնամ, մին ել յետևիցս վանեցի տղաների ծանոթ կանչը լսեցի.

«Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», լրագիր:

Իրսի աշխարհում մեծ անցքեր չկային, խորհրդային յերկրների դեմ կռիվ չկար, մնացած խուրդա լուրերի համար ել ափսոսում էյի թե փող ծախսեմ. ասում էյի, ստացածս շատ է քիչ, ընթերցարանում կկարգամ: Եսպես մտածելով շարունակում էյի ճանապարհս: Մեկ ել կարծես մեկը փեշս քաշեց-- «Բա ամոթ չի, վոր քեզ պես գրագետ բանվորը լրագիր չառնի: Ի՞նչ, Պետրոսը, Փիլիպոսը, բանվորներդ ու գրաճանաչ մշակ մարդիկդ վոր լրագիր չառնեք, բայ ել ո՞վ պիտի առնի: Լրագիրը հո սպեկուլյանտների ու գեղական տղրուկների համար չի տպվում»:

Յես մինչև մազերիս ծայրը կարմրեցի, իսկույն  
յետ դառա.

— Այ տղա, էյ, լրագիր տուր:

Առա «Ս. Հ.» №-ը և սկսեցի կարդալով գնալ  
դեպի գործարան:

Աջ ու ձախ շատ շուռ ու մուռ տվի, ծանր ու  
թեթև արի տնտեսական և քաղաքական հողված-  
ներն ու զեկուցումները.

— Չե, ախպեր, դրանք քո ատամի խարջ բաներ  
չեն: Ուրիշ բանի նայիր:

Կարդացի մի քանի հեռագրեր, հետաքրքրվեցի,  
թե դաշնակցականներից ելի ովքեր են քայքայվել:  
Հանկարծ մի ծանոթ ձայն հետևիցս կանչեց:

Հարևանս եր, «Ս. Հ.»-ի համարը ձեռին՝ ծիծաղում  
և մատով լրագրին եր ցույց տալիս:

«Յերևի մի ոյինբազ բան ե գտել», — մտածեցի  
յես և դարձա նրա կողմը:

Նա արտասուենքը սրբելով (հարևանս յերբ ծի-  
ծաղում եր, աչքերից արցունք եր վաղում) մտեցավ-  
կանգնեց կողքիս և մատով ցույց տվեց մի նկար.  
Կենդան այնքան ջուր եր թափել իր սենյակի հողե  
հատակին, վոր հողը ցեխաջրի յեր վերածվել. հիմի  
յել ետ ցեխաջուրը բարձրացել. խեղդում եր նրան:  
Նա մեջքի վրա պառկած՝ վոտ ու ձեռով անշնորք  
շարժումներ եր անում, վոր վոտքի յելնի:



«Վոս ու ձեռքեվ անշնորք շարժումներ եր անում»...

Նայեցի թե չե՝ ծիծաղս պրծավ, վո՛նց պրծավ: Հարեանս ել, վոր մի պահ լռել, ինձ եր նայում, շըրխակալով ձեռքերն իրար խփեց և նորից քահ—քահ ծիծաղեց:

Յերբ հանգստացանք, նա իր ճամբով գնաց, յես ել իմ:

Գործարանում նկարը ցույց տվի ընկերներիս: Նրանք ել ծիծաղեցին: Մեկն ել, վոր ամենիցս ավելի աչքարուցն եր յերևում, կարդաց նկարին վերաբերող հոդվածը: Հոդվածն ինձ շատ չզարմացրեց, թեև կարճ եր—յես եղպիսի կարճ հոդված որումս տեսած չեյի: Բայց տակին գրված եր՝ «բանթղթ. Սեթո:» Ես «Բանթղթ» բառը յես կարծում եյի կամ ոտար բառ ե, կամ կրճատված անուն: Հետո հիշեցի մեր մի տաղկահայ ընկերոջ «բանթող»-ը (այդպես եր անվանվում նա գործադուլին), բայց տեսա, վոր ելի հիմար բան ե գուրս գալիս:

«Բանթղթն» ինձ համար եղպես ել պետք է անհայտ մնար, յեթե մեր «Չալոււմը» (այդպես եր տարիքով ամենքիցս փոքր մեր ընկերոջ, Մինասի, ավելորդ անոււնը) հանկարծ չբղավեր.

—Ա՛ֆերիմ, բանթղթակից: Լավ է շշպուել մեր փնթի—փուլատներին:

—Ո՞վ է եդ «բանթղթակիցը»:

—Բանթղթակիցն է, ով է:

—Եդ յես ել եմ տեսնում: Բայց ի՞նչ հորս ցամփս է դա. պաշտոնն է, արհեստ, յեվրոպական խոսք. յես առաջին անգամ եմ լսում:

—Ուղտի ականջում ես քնած, ի՞նչ է: Առաջին անգամ... ամեն ոք լրագրում տպում են, չէս կարդացել:

—Ուրեմն տեղի անոնն է:

—Չէ՞ մի՛ պնդեր, — հռհռաց Չալոււմը: Բանթղթակիցը, սիրելիս, մեր ընկեր բանվորն է, լրագրում գրող բանվորը:

—Մեր ընկեր բանվորը — ուրեմն բանվորն ե՞լ կարող է գրել:

—Ի հարկե է. կարող էս, դու յել գրի, — վրաբերեց Չալոււմը: Տասնյակ աչքեր ինձ նայեցին:

—Կարող էս:

Յես սկսեցի կարդալ թղթակցությունը: Յերբ պրծա, ասեցի.

—Շատ հասարակ բան է յերեւում: Թվում է, թե կարող եմ, համա մի տեսակ յերկյուղ եմ կրում:

«Գրողը տանի, յեթե լրագրում գրելն ենքան հեշտ լինի, վոր յես ել կարողանամ գրի, բա տասնյակ հազարով գիմնազիա, թեմական, ճնմարան ու համալսարան ավարտած մարդիկ կան, վո՞նց է, վոր բոլորն ել չեն գրում»:

Յես նորից կարդացի հողվածը: Քանի կարդում,

այնքան ավելի եյի համոզվում, վոր այդպես գրելը  
դժվար չի:

—Սերտել ես ուզում, ի՞նչ ե, — ծիծաղեցին ընկեր-  
ներս:

—Եստեղ / սերտելու ի՞նչ կա վոր:

—Թե հեշտ ե, ինչի՞ դու յել չես գրում:

—Ի՞նչի չեմ գրի:

—Բայց ի՞նչ կգրես... այս անգամ աշխատանոցի  
մյուս ծայրից լավեց հարցը:

«Ճիշտ վոր, ի՞նչ գրեմ... ի՞նչի մասին»...

### 2. Նյո՛ւթ, նյո՛ւթ

Այն որվանից, յերբ յես վորոշեցի գրել թեր-  
թում և ուրեմն բանթղթակից դառնալ, յես կորցրի  
իմ քունն ու հանգիստը:

Ցերեկը խիստ թափթփված եյի. մտքերս ասես  
գետին թափված ընկուզներ—ամեն մեկը մի կողմ եր  
գլորվում, չեյի կարողանում հավաքել, իրար կողքի  
դնել: Ման գալիս միշտ նյուլթի վրա եյի մտածում:  
Փողոցով անցնելիս սրան—նրան եյի դիպչում, քիչ է...  
մնում կառքերի կամ ձիերի տակն ընկնեմ: Գիշերները



...Բլուզս վառներս եյի քաշում...

յերազուածս «նյութ» եյի տեսնում և առավոտը վեր կենալիս, մտքի ծովն ընկած լինելով, բլուզս վոտներս եյի քաշում, շալվարս ձեռքերիս: Իսկ վոտնամաններս հո միշտ վոխսս եյին ընկնում—աջը ձախին եյի հազում, ձախը աջին:

Խեղճ կինս ել չեր իմանում, թե ինչ քոր ե ընկել ջանս. շիվար-մուրը նայում եր վրաս, որորում եր գլուխը և ծնկներն եր ծեծում:

Փողոցով գնալիս յես աչքերս ցուցանակներին եյի չոում, ցուցափեղկերին եյի նայում, տների լուսամուտներին, տանիքներին, ուր ճնճողուկներն եյին թռչկոտում: Մի՞թե վոչինչ չպետք ե պատահի:

Բայց վոչինչ չեր պատահում:

Որեր շարունակ յես այդ ձևով հետաքրքրական նյութ եյի վորոնում, բայց ժամանակը թարսվել եր ինձ հետ. ցուցանակների վրա և ցուցափեղկերում գրչի արժանի վոչինչ չկար և վոչ ել տների լուսամուտներից եյին մարդիկ թափվում կամ տանիքներն եյին վուլ գալիս:

Կատարյալ աննյութություն եր:

Մի որ ել ասի գրադարան գնամ: Ո՞վ գիտի, գուցե ելի եդ տեսակ տեղից մի բան ծագի:

Գնացի, անցնում եմ գրքերով լի պահարանների առջևից. փայլուն ասլակուլ յետևից ինձ են նայում գրքերի թիկունքների վոսկետառ գրությունները: Ապակիներն ու այդ գրվածքները խոսք մեկ արած ծաղրում են ինձ:

— Խեղճ վողորմելի: Նյութ ես վորոնում: Քեզնից առաջ քանի միլիոն մարդ ե յեկել ու գնացել: Տես, միայն այսքան յերջանիկ գլուխ ե նյութ գտել: Բո-

լոր նյութերն արդեն վաղուց սպառված են: Գնահ, գնահ գործիդ կաց, սա քո տեղը չի»:

Ծոծրակս քորելով, թակված շան պես պոչս քաշում, դուրս եմ գնում:

Չգիտեմ ինչպես յեղավ, հանկարծ աչքս յերկնքին առավ (յես յերկնքի հետ ենքան ել բարեկամ չեմ):

«Ահա, ահա իմ փրկության աղբյուրը», — մտածեցի յես: Այդտեղը մարդիկ դեռ ևս այնքան ել քրքրած չեն լինի: Դա յե քո նյութի աղբյուրը, վորսն ու գրի: Չե՞ վոր քսաներորդ դարն է. «հողն ու ջուրը վաղուց են նվաճված, հիմա հերթը յերկնքինն է», — ասված եր ողագնացության վերաբերյալ մի թռուցիկում:

Յես այլևս յերկար չմնացի դուրսը: Անմիջապես տուն շտապեցի:

«Ո՞վ յերկինք, իմ վերջին հույս ու ապավեն, սևերես չթողնես ինձ»:

Յես սկսեցի վերնագրի մասին մտածել.

«Նախ վերնագիրը և ապա նոր հողվածը»:

Բայց մինչ վերնագիրը կգտնեյի, մեկը թևիցս բռնեց.

— Տես ինչ բոլ գիրք են ստացել:

Խոսքը Պետհրատի գրախանութին եր վերաբերում, վորի ցուցափեղկում բաղմաթիվ նոր գրքեր եյին շարված: Հանկարծ աչքս առավ մի գրքի. «Պատերազմ ողի մեջ». Հերբերտ Ուելսի:

Կարծես կարիճ խայթեց ինձ. ցնցվեցի:

«Ո՞րն ել է նվաճված: Նզովից արմատներ: Չեյիք կարող, ինչ է, գոնե ողն ինձ բաժին թողնել: Սատանան անգլիացի:

Տեսնես վաղձուց ե գրել»:

Գրքի վրա տպված էր՝ «Պետհրատ, 1923 թ.». յերևի մի քանի որով ե ինձնից առաջ ընկել եղ Ուելս սրիկան: Թո՛ւ, եսպիսի յել անբախստություն»:

Ողից ու յերկնքից ել հույսս կտրվեց:

Թափթփվածությունս ծայր աստիճանի հասավ: Կինս ուղղակի յերեխայի պես հետևում եր ամեն քայլափոխիս. շտկում եր շորերիս փեշերն ու ոճիքը, կոճակում եր շալվարիս կոճակները, վորը հաճախ մոռանում, առանց կոճկելու եյի դուրս գնում, ուղղում եր «ութանկյունիս» (կեպկաս), վորը մեծ մասամբ ունկը աջ-ձախ կամ յետև դարձրած եյի դնում: Իսկ յերբ դուրս եյի գնում, նա արդեն ամեն ըրպե սպասում եր, թե կարող եմ կառքի կամ ձիու տակ ընկնել:

— Թամամ պատիժ ես դառել գլխիս: Տո՛, ուշքդ հավաքի, յելի, յերեխա հո՛ չես:

Իայց ո՛ւմ ես ասում: Նյութը թողնում եր ուշք մնա գլխումս, վոր դեռ հավաքելու մասին ե՛լ մտածեմ:



Ուռուս, նյութը գտնված ե:

Տեսնես վաղձուց ե գրել»:

Գրքի վրա տպված էր՝ «Պետհրատ, 1923 թ.». յերևի մի քանի որով ե ինձնից առաջ ընկել եղ Ուելս սրիկան: Թո՛ւ, եսպիսի յել անբախտություն»:

Ողից ու յերկնքից ել հույսս կտրվեց:

Թափթփվածությունս ծայր աստիճանի հասավ: Կինս ուղղակի յերեխայի պես հետևում եր ամեն քայլափոխիս. շտկում եր շորերիս փեշերն ու ոճիքը, կոճակում եր շալվարիս կոճակները, վորը հաճախ մոռանում, առանց կոճկելու եյի դուրս գնում, ուղղում եր «ութանկյունիս» (կեպկաս), վորը մեծ մասամբ ունկը աջ-ձախ կամ յետև դարձրած եյի դնում: Իսկ յերբ դուրս եյի գնում, նա արդեն ամեն ըոպե սպասում եր, թե կարող եմ կառքի կամ ձիու տակ ընկնել:

— Թամամ պատիժ ես դառել գլխիս: Տո՛, ուշքդ հավաքի, յելի, յերեխա հո՛ չես:

Իայց ո՛ւմ ես ասում: Նյութը թողնում եր ուշք մնա գլխումս, վոր դեռ հավաքելու մասին ե՛լ մտածեմ:



Ուռուս, նյութը գտնված ե:

դիրքը ու եղ բոլորի մասին մի լամ թղթակցություն գրեմ:

Քանի գնաց, այս վորոշումն ավելի արմատացավ Սարգսի մեջ: Նա յեռանդավորվեց, քայլերն ու առհասարակ շարժումներն արագացան, աչքերը մի տեսակ գողտրիկ փայլ առան, դեմքն ինչ վոր վճռականության լույսով պսակվեց և մտքերը, փախած գինավորների պես, կրկին յետ եկան ու կարգով շարվեցին նրա ուղեղի դահլիճում: Սարգսի պատմական դառած թափթփվածությունն, ի մեծ ուրախություն նրա յերիտասարդ կողակցի, անցավ:

Այժմ նա զգաստ եր ու աչալուրջ և վոչ գործարանում, վոչ ել վորևե այլ տեղ—վոչ վոք չեր համարձակվում վոչ թե ծաղրի բռնել, այլև ասել, թե յերեսիդ վրա քիթ կա, թեև վերջինիս բռնած տարածությունն անց եր նորմայից:

—Ես դեռ վոչինչ, սպասեք մի կիրակին գա, գյուղ գնամ. են վախտը նոր կխոսեմ ձեզ հետ:

Յեկավ ցանկալի կիրակին: Սարգիսը վաղ առավոտյան վերկացավ, հագնվեց, թեթև նախաճաշ արեց և հայտնեց կնոջը, վոր Զ. գյուղն է գնում:

Ու գնաց: Թղթապնակը թևի տակը տվեց, ճամփեն առաջն արավ ու գնաց:

Շուտով քաղաքի անմարդաշատ մասը հասավ: Տներն այդտեղ նոսր եյին, անցուղարձը սակավ, բայց գյուղերից յեկողներին թիվ կար, հաշիվ չկար: Կարծես թե հանդիպակաց սարերից գաղթականության հոսանք կամ մի հեղեղ եր պլրծել—գալիս:



„Սայլերը կողք-կողքի, իրար յետևից“

Սայլերը կողք-կողքի, իրար յետևից, միորինակ ճոռոցով առաջ ելին շարժվում՝ հազար ու մի տեսակ բարիքով բեռնված: Կանայք ու աղջիկները կը ճուճներով կաթն ու մածուկն ելին բերում, տղամարդիկ շալակներին հաց և ձեռքներին հավ կամ քաղալակով ձուռ. յերբեմն ել բեռնած ել կամ վոչխար ելին քշում շուկա:

Սարգիսն առաջ ենքան ել չեր հետաքրքրվում դրանցով:

— Ի՞նչ հետաքրքրվես. դեղացի մարդիկ են, ելի, — ասում եր:

Յերբ քարափի ծայրին հասավ և բարձր սարն իր դժվարին վերելքով անառիկ բերդի պեսառաջը ցցվեց՝ Սարգսի քայլերը դանդաղեցին ու վերջապես կանգ առավ:

«Ութանկյունին» հանեց, ճակատի քրտինքը սըրբեց, յերեսը դեպի քաղաք դարձրեց ու նստավ ճամբի կողքին:

— Ինչքան գեղեցիկն է մեր քաղաքը, բա՛ղ ու բաղնիք մեջ կորած, առջևը լայն հորիզոն և հորիզոնի ծայրին Բարդող լեռներն ու պահակի պես միշտ արթուն, աչքը դեպի մեզ պահած՝ ծեր Արարատը և իր ծերութեան միակ նեցուկ՝ փոքր Մասիսը:

Սարգիսը բավականաչափ զմայլվեց քաղաքի և առհասարակ իր առաջ բացվող տեսարանով և զարմացավ, վոր մինչև այժմ մտքովն անդամ չի անցել զբոսանքի կալ այդտեղ:

Մտքերը ճյուղավորվեցին, վտակ առ վտակ հոսեցին, ցրվեցին տարբեր կողմեր. ընդհանուր հոսանք ել չկար: Յեվ միայն այն ժամանակ, յերբ բավականաչափ հանգստացել եր, նորից ընդհանուր հունի մեջ մտցրեց նրանց:

Գյուղացիների հեղեղը շարունակվում եր: Սարգիսը վտարի յելավ, վոր ինքն ել իր ճամբեն շարունակի, բայց դժվարին վերելքը նորից աչքին առավ թե չե—կանգ առավ: Ու հանկարծ մի լուսավոր միտք ծագեց գլխում:

«Ինչ կարիք կա տասնյակ վերստեր կտրել սարի ու քարի միջով, գյուղացի տեսնելու, գյուղի դրություն նկարագրելու համար: Տեսնելով չեմ բավականանա. միևնույն է, գրելիքիս նյութը կրկին կենդանի մարդկանցից պետք է քաղեմ: Միթե՞ այսքտն գյուղացիների մեջ մեկը չպետք է լինի, վոր կարողանա բավարարել իմ հարցասիրութեանը:

Սարգիսն անմիջապես մոտեցավ մի միջին տարիքի գյուղացու, վոր բռնված սայլը կանգնեցրել, ինչ վոր բանի յեր սպասում:

—Մի ես կողմ արի, բան ունեմ քեզ հետ:

Գյուղացին բրդոտ ունքերի տակից աչքերը Սարգսի վրա գցեց, տեսավ թևի տակին «դավթարը» և լուռ ու հնազանդ հետևեց նրան.

—Յերևի հարկ հավաքող ա,—մտածեց նա:

Սարգիսը քաշեց նրան պատի տակ:


Գյուղացու սիրտն ահ ընկավ: Հանցանքում բռնված գողի պես՝ փափախն ավելի խորը քաշեց աչքերին և ավելի հաճախ սկսեց աղերսալիւր հայացքը նրա դեմքին ուղղել: Սարգսի վարմունքի խորհրդավորութունը շատ վտանգավոր եր թվում:

—Տունս քանդվեց,—մտածեց գյուղացին—կասես իմացել ա, վոր խոտի տակը թուխուն եմ դրել: Վայվայ, կորա:

Յերբ պատի տակին նստեց Սարգիսը և «դավթարը» ծնկանը դրեց ու մատիտը ձեռն առավ, գյուղացու հույսը վերջնականապես կտրվեց.

—Ես թավուր կամիսար չեմ տեսել. առանց դես ու դենի՝ պրատակոլ ա գրում: Վախ-վախ: Քո հերն ու մերը գյուղադրոտ ըլնեյին, Մադոյի աղջիկ, վոր ես թավուր խրատ չտայիր ինձ: Յես քանի ասի՝ չի ուղի, թուխունը կանդրաբանդ ա, կբռնեն, տուն ու տեղս կազոննի կշինեն, ինձ ել չեկեքում կփթացնեն՝ չեղավ: Ասած ե, կնիկը մեկ ամգամ վոր սատանի ձի հեծավ՝ ել վեր չի գա, մինչև մի զուլում չբերի գլխիդ:

—Արի աղաչեմ—խնդրեմ, բալի ների, երեխքիս ու քուլփաթիս խեղճ գա...



«Քրտինքը կտխեց գյուղացուն. քրտինքն առու—առու վազում եր»...

Քրտինքը կտխեց գյուղացուն, քրտինքն առու-առու վազում եր նրա թրծած աղյուսի տեսք առած յերեսից ու բաց, մազոտ կրծքից:

Են է, ուզում եր բերանը բանա, վոր իր աղաչանքն սկսի, յերբ Սարգիսը, նրա ներքին պայքարին անտեղյակ, հարցրեց.

—Վճրտեղացի յես:

Գյուղացին իսկույն չպատասխանեց. նա մեկ ուզում եր խաբի, ուրիշ գյուղի անուն տա, մեկ ել վախեցավ տանեն-բռնեն, սուտը բացվի, մեղքն ավելի ծանրանա.

—Ափեցի յեմ:

—Ձեր շրջանում գյուղատնտես կա:

Գյուղացին գյուղատնտես բառը չհասկացավ, բայց նրան դուր գալու համար վորոշեց դրական պա-

տասխան տալ, ո՞վ գիտի ի՞նչ բան է և ինչի՞ համար  
է հարցնում: Ինչո՞ւ չե՞ս ասեմ:

—Կա՛, ինչպես չե՛:

—Ձեր գյուղ գալիս—գնում է, ցանքսերին նա-  
յում է:

«Տես ի՞նչ տեղերից է բռնացնում: Անպատճառ  
մատնել են ինձ. թե չե՞ տուտի դշի պես գուզ իմ  
գլխին չեր կայնի ու թուքումուքս դամաղիցս չեր  
կպցնի: Ա՛յ, ինչքան եկող-գնացող կա—հե՛չ վրաները  
նայում ել է»:

Գյուղացին այժմ այնպես կարծեց, թե «գյուղա-  
տնտեսը» ցանքս ստուգող պաշտոնյա յե. մի տեսակ  
հողագործության «աքսզչի»: Ու թեև եղ տեսակ  
պաշտոնյա իր որումը չե՞ր տեսել, բայց վախեցավ  
վոր այդպիսին հանկարծ կարող է լինել և անպատճառ  
կթշնամանա իր հետ, յեթե իմանա, վոր ինքը նրա  
մասին «չե՛» յե պատասխանել:

—Հա՛, ինչպե՛ս չե՛. մի՛շտ գալիս-գնում ա՛:

—Նոր ձևով ցանքեր անում եք: Տրակտոր բա-  
նեցնում եք:

—Ինչպե՛ս չե՛, բոլորն ել նոր ձևով են ցանում  
ու «դրախտոր» են բանեցնում:


—Իսկ ակումբ, խրճիթ-ընթերցարան, բեմ՝ ունե՞ք:

—Բո՛լ, ըմբենից ել ունենք:

—Բաղնիս ել ունե՞ք:

—Հրաման քեզ, դրանից ել ունենք:

Մի քանի այսպիսի հարցեր ել տվեց Սարգիսը,  
վորոնք գյուղացու կաժը բոլորովին խառնեցին—  
խեղճն այլևս չեր իմանում խելագար համարի նրան,  
թե չափազանց գաղտնապահ—ու միշտ նույն փրկա-



1528  
I

րար՝ «հա, հրաման քեզ, ունենք, բոլ» խոսքերն երկրկնում: Իսկ Սարգիսը, նյութը վոչ թե միայն գըտնված, այլև համարյա թե պատրաստ համարելով, բաց թողեց նրա ոձիքը:

Գյուղացին յեզիպտական գերությունից ազատվածի պես պոկ յեկավ՝ առանց յետ նայելու: Սայլին հասնելով, արխալուխի փեշը բարձրացրեց, յերեսի քըլտինքը սրբեց և նոր վտանգի չենթարկվելու համար՝ յեզների գլուխը շուռ տվեց, ու քշեց ուղիղ դեպի գյուղ:

«Չեմ ուզում, ախպեր—ասավ նա, խոսքը քաղաքին ուղղելով,—վոնչ քո խերն եմ ուզում, վոնչ ել քո շառը: Ավելի լավ ե կես գնով իմ ապրանքն իմ դռանը ծախեմ ու ես թավուր փորձանքի ուստ չգամ»:

#### 4. Առաջիճ քղբակցութիւնը յեվ Երա հեռեվանքերը

Յերկուշաբթի որը Սարգիսն իր թղթակցությունը խմբագրատուն տարավ: Ինչպէս եր տրոփում, ինչպէս եր թրթփում խեղճի սիրտը. քիչ եր մնում դուրս պրծնի կրծքի վանդակից ու փախչի: Թեև դեռևս վաղ եր և որն ել բավական զով, բայց Սարգիսը քրտինքի մեջ կորավ, մինչև յերկրորդ հարկ բարձրացավ:

Նախասենյակից դուռն անմիջապես տանում եր մի մեծ սրահ, վորտեղ պատերի մոտ շարված եյին սեղաններ, իսկ նրանց վերևը զանազան թղթեր կային. «Բանբաժին», «Խրոնիկա», «Թարգմանիչներ», «Մատենավար», «Կարճ խոսիլը», «Գործդ վերջացրիր՝ գնա» և այլն:



«Կեպկան թևի տակն առած»:

Սարգիսը մնաց մուրրմուռնքի մեջ—իր գրածին համապատասխանող բաժին չկար:

Ի՞նչ աներ:

Կեպկան թևի տակն առած, վոտների մատների վրա քայլելով, մոտեցավ դռանն ամենից մոտ գտնվող մատենավարի սեղանին.

—Ընկեր, թղթակցություն եմ բերել, ո՞ւմ տամ:  
Ընկերն ինչ վոր թուղթ եր մատյան մուծում,  
առանց գլուխը բարձրացնելու՝ մեկնեց ձեռքը:

—Տվե՛ք:

—Իսկ պատասխան... ո՞ւմնից կարող եմ ստանալ:

—Ի՞նչ պատասխան:

—Տպվելու կամ չտպվելու մասին:

—Վաղը այս ժամին յեկեք, յես կպատասխանեմ:

Սարգիսը գնաց: Իսկ թղթակցությունը մատենավարի գրքից, վորպես քավարանցից, անցավ:

մտաւ հանդիպակաց սենյակ, ուր քարտուղարն եր գտնւում, և ասլա այնտեղից ել ճանապարհորդեց դեպի խմբագրի սեղանը:

Մյուս որը, յերբ Սարգիսը վորոշված ժամին պատասխանի յեկամ, նրան քարտուղարի մոտ ուղարկեցին, վորը պահանջեց Սարգսի անուն-աղգանունը, հասցեն, ստուգեց թղթակցութեան փաստերի հիմնավոր լինելն, ասեց, վոր թղթակցութեան համար պատասխանատուն ինքը թղթակիցն է, խորհուրդ տվեց գրել կարճ և միայն փաստեր հաղորդել և խոստացամ նյութը տպարան ուղարկել: Յերբ Սարգիսը դուրս եր գնում, բանբաժնի վարիչը, վոր ներկա յեր այդ խոսակցութեանը, մոտեցամ, ծանոթացամ նրա հետ և խնդրեց, վոր գործարանի կյանքից գրի:

Մինչ այդ, Սարգսի թղթակցութեանը տպարան գնաց. տպագրական մամուլին դեռ չհասած, խեղճն արդեն այնքան եր կերպարանափոխված, խմբագրի անխնա գրիչն այնքան եր հոշոտել նրա մարմինը, վոր յերբ մյուս որն «Որինակելի գյուղ» վերնագիրը ճակտին թերթի «Գավառներում» բաժնի եջերից դուրսնայեց և Սարգսի աչքին ընկամ, սա չճանաչեց իր սիրասուն գավակին: Թղթակցութեանից միայն բովանդակութեանն եր իրենը. մնացածը խմբագրութեան գործն եր:

Իայց միայն Սարգիսը չեր, վոր գարմացամ իր թղթակցութեան վրա:

Յերբ վոր թերթի №-ը Ափ գյուղ հասամ և բջիջի քարտուղարը կարդաց՝ աչքերին չհավատաց: Մոտ կանչեց իր մտերիմ գյուղխորհրդի նախագահ Սիմոնին և տոաց:



«Ի՞նչ ես կարծում, ես մեր գեղն աս, թե չե:»

— Ի՞նչ ես կարծում, ես մեր գեղն աս, թե չե:

Սիմոնն իր կարճատես աչքերը կկոցելով՝ լրագիրը ձեռքն առավ, կարդաց թղթակցությունը և դարմանքից դեմքը յերկարեց, այժի դեմքի տեսք առավ:

— Այ քեզ ս՛յին. մենք այսքան կուլտուրական գյուղ ենք ունեցել ու բանից բեխաբար ենք: «Գյուղըն ունի խրճիթ-ընթերցարան, ակումբ, լաղնիս»:

— Հհա, հա, հա, հա...

«Շրջանային գյուղատնտեսը սիրով այցելում ե Ասիլը, դիտում ե շարքացան արտերը և խորհուրդներ ե տալիս ու գյուղացիք սրբությամբ կասարում են նրա պատվերները»:

Սիմոնը ծիծաղից փորը բռնեց:

«Այս տարի բոլոր արտերը տրակտորով են հերկել»:

Այստեղ արդեն քարտուղարն էլ միացավ նրան.

— Տրակտոր. — մեր ես քարերի մեջ արոր շատ

և բանում, վոր մնաց տրանկատի բերեն, են ել ովքեր  
ափեցիք: Վնյ մեր մեղքին:

Օրծաղի տարափն անցավ և քարտուղարը լըջո-  
րեն նայեց խնդրին:

— Չէ, Սիմոն ջան, սա լուրջ բան է և պատաս-  
խանատուն ամենից առաջ յես ու դու յենք: Յեթե  
Գավկոմն ու Կենտկոմը չգիտեն, Շրջկոմը հո լավ գի-  
տի, վոր ես լուրը տակից գլուխ հնարովի յա ու կարող  
ե կարծել, թե մենք ենք գրիլ տվել: Մենք պետք է  
հերքենք և թղթակցություն գրողին պատժել տանք:

Սիմոնն ինքն էլ նույնն էր մտածում:

Միացյալ ուժերով համապատասխան գրություն-  
ներ ուղարկեցին թերթին և Գավկոմին:

### 5. Նոր նվաճումներ

Մինչ այս, մինչ այն, Սարգիսն, առաջին թղթակ-  
ցությունը տպվելուց և մանավանդ բանբաժնի վարի-  
չի ընկերական քաջալերանքից թև առած, որական  
յերկու-յիսեք թղթակցություն էր գրում, այս անգամ  
արդեն գործարանի կյանքից.

— Հողվածներդ 15-20 տողից ավել չպետք է լի-  
նեն. տեսնում եք, վոր մի համեստ անկյուն ենք գը-  
րավում թերթում: Բացի այդ, պետք է գրեք պարզ,  
հասկանալի լեզվով ու կարճ նախադասություններով.  
մի մոռացեք, վոր բանվորների համար եք գրում:  
Գրեցեք միայն չոր փաստեր, դատողություններ զուր  
տեղը մի արեք. դրանք ավելորդ են:

Համոզված, հատուկիչ յեղանակով էր խոսում  
բանբաժի վարիչը: Տպված լավագույն նյութերից նը-  
մուշներ էր կարգում.

— Այ եսպես գրեցեք, լավ ե, չե՛:

Սարգիսը շատ եր փորձում 15—20 տողով բա-  
վարարվել, բայց ի գուր:

Խմբագրական պրեսսի բարերար ազդեցությունն  
եր միայն, վոր նրա գրածների ծավալը վոչ թե 15  
ու 20, նույնիսկ 10 տողի յեր հասցնում: Իսկ լեզուն-  
լեզվի բանը հո թամամ կրակ եր: Սարգիսը գրում եր՝  
«Չկա վոչ մի բան, վոր ավելի վատ լինի, քան հայ-  
հոյելն ու հարբելը, վորի մասին քանիցս անգամ գըր-  
վել ե»: Իսկ խմբագրական կարմիր թանաքի անխու-  
սափելի ներգործությունն այդ նախադասությանը  
հետևյալ ձևն եր տալիս. «հայհոյելուց ու հարբելուց  
վատ բան չկա. այդ մասին շատ ե գրվել»: Նոր ուղ-  
ղագրությունն ել շատ եր նեղացնում Սարգսին. «ե»-ն  
և «յ»-ն անբաժան ամուսիններ եյին թվում նրան,  
հենց վոր «ե» գրեր, առջևից անպատճառ պետք ե մի  
«յ» պուպուզացներ:

Սակայն, չնայած այս փոքրիկ անախորժու-  
թյուններին, Սարգիսը հաստատուն հող եր զգում իր  
վոտքերի տակ: Իսկ բանբաժնի վարիչի հովանավո-  
րությունը նրան ուղակի հերոս եր դարձնում:

— Եդ թերությունները շուտով կուղղես, եդ վո-  
չինչ: Միայն թե համարձակ լինես և յերբեք կողմ-  
նապահություն չանես: Տեղն եկած ժամանակ կպաշտ-  
պանենք: Քեֆդ քոք պահի:

Գործարանում ել մեծ հարգանք եր վայելում  
Սարգիսը: Նրա «Յասար» (Յակուլյան Սարգիս) ստո-  
րագրությունն ամենքին հայտնի յեր գառել:

— Կեցցես տղա, լավ առաջ գնաց:

— Մեր շահերի ամենալավ պաշտպանն ե, բան-

վորա-գյուղացիական կառավարութեան արթուն աչքը:  
 — Հմի սրա ահու մեր գործարանում ապորինի  
 գործողութեանները վերանում են: Կառավարիչն էլ  
 է քաշվում սրանից:

Այսպես էլին արտահայտվում Յասարի (այ-  
 սուհետև մենք էլ այնպես կանվանենք մեր հերոսին)  
 մասին նրա ընկերները:

Իսկ Յասարն առաջվանից ավելի համեստ ու  
 աշխատասեր էր դառել:


### 6. Վերջին փորձություն

Այս վիճակում էլին Սարգսի գործերը, յերբ Ափ  
 գյուղի կոմբլիշի քարտուղարի և խորհրդի նախագա-  
 հի ստորագրութեանները կրող թղթերը, Շրջկոմի և  
 Գավկոմի շտամպների պատկերն ու քարտուղարների  
 շեղ մակագրութեանները շալակած՝ յեկան «Խ.-Հ.»-ի  
 խմբագրատուն հասան:

Մյուս որն և եթ Յասարին պոստ—արկղի միջոցով  
 խմբագրատուն կանչեցին: Յասարը շատ աշխատեց  
 հասկանալ այդ անակնկալի պատճառը, բայց իզուր:  
 Տարակուսանքի մեջ մնաց:

Յերբ իրեն ծանոթ քարե սանդուխքով բարձրա-  
 ցավ և մութ նախասենյակից անցնելով, խմբագրա-  
 տան ընդարձակ դահլիճի դուռը բացեց՝ կարծես  
 փշով խփեցին յերեսին—այնպիսի չոր և նախատալից  
 հայացքով դիմավորեց նրան բանբաժնի վարիչը,  
 վոր մի բարեհամբույր, ժպտերես և պարզասիրտ յե-  
 ռիտասարդ էր:

— Եսպես էլ մարդու խաբեն, եսպիսի՞ յեկ ոյին



— «Եսպես ել մարդու խաբեն, եսպիսի յել ոյին  
հանեն մարդու գլխի»...

հանեն մարդու գլխի: Տո՛, դու քանի գլխանի յես,  
վոր մի ամբողջ խմբագրություն ծիծաղատեղ ես  
դարձնում:

Այսպես և սրանից ել ավելի չոր ու փոթորկալի  
խոսքեր տեղացին Յասարի գլխին: Խեղճը կաթվա-  
ծահարի պես աչքերը լայն չռեց և ահանջներին չը-  
հավատալով՝ արձանացավ դռների մեջ ու լուռ լը-  
սում եր անսպասելի հանդիմանությունը:

Յերբ բանբաժնի վարիչի բարկությունը մի փո-  
քըր մեղմեց և աշխատակիցներն «ինչ ե պատահել,  
ինչ» կանչելով նրան մոտեցան՝ Յասարն ել ուշքը  
գլուխը հավաքեց և հարբածի պես որորվելով՝ դեպի  
բանբաժնի ամպրոպաբեր վարիչը գնաց: Նա ուզեց  
հարցնել, ինչո՞ւմն ե իր հանցանքը, ինչո՞ւ յես այդ-  
պես բղավում իր վրա, — բայց յերկուզից կարծես լե-  
զուն կուլ եր գնացել, վոչինչ չկարողացավ ասի:

Յերբ վոր ամպրոպը մի վերջին դղրդյունով

անցավ և բան բաժնի վարիչը մասամբ շուրջը հավաքվածների հորդորների ազդեցութեամբ՝ փոքր ինչ մեղմեց, Յասարի խոսելու ընդունակութունը վերականգնվեց:

— Ախր մի ասեք տեսնեմ մեղքս ի՞նչ է, վոր եղպես հարձակվում եք վրաս:

Բանբաժնի վարիչը զսպեց իր մեջ նորից բարձրացող բարկութեան ալիքը և բացատրեց Յասարին նրա հանցանքը:

Յասարն ապշեց:

— Ինչպէս կարող եր են խեղճ ու կրակ գյուղացին այդպես խաբել ինձ: Չե՞ վոր...

Ու պատմեց իր առաջին թղթակցութեան ծագումը:

Բան բաժնի վարիչի ճակտի կնճիռները, Յասարի անկեղծ խոստովանութեան հմայքի ազդեցութեամբ, խճճված կծիկի պես կամաց-կամաց բացվեցին: Շուտով նրա դեմքին մի ներողամիտ ժպիտ իաղաց.

— Բա մարդ ել եղքան միամիտ կլի՞նի. խեղճն ով գիտի ճշմ տեղ ե դրել քեզ և ահից՝ ինչ ասել ես, այն յե պատասխանել:

Մի փոքր անց, Յասարին առաջնորդեցին խմբագրի սենյակ:

Իսկ այնտեղից Յասարն ու բանբաժնի վարիչը միասին դուրս յեկան, վարիչը ծիծաղելով և Յասարի ուսին խփելով, իսկ Յասարը դեռևս մահվան շորշոփը վրան ու մի տեսակ «վերացած» հայացքով:

Ժամանակի ընթացքում Յասարի գլխով ելի նորանոր փոթորիկներ անցան, բայց նա այժմ՝ արթուն պահակի պես ամուր եր պահում իր դիրքերը և բանթղթակցի պատիճն օր օրի վրա ավելի ու ավելի յեր բարձրանում:

Բանբաժնի վարիչը նրան իր աջ կուռն եր համարում, ընկերներն ու ծանոթները հետաքրքրությամբ սուրասում եյին նրա ամեն մի նոր հողվածին, գործարանի վարչությունը հաշվի յեր առնում նրա կարծիքը և յերբ վոր Յասարն անցնում եր փողոցով, շատերը նրան մատով եյին ցույց տալիս:

